# ԳՐԱԿԱՆ

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*
* *

*Հրաշալի գիշեր . . . խաղաղ քուն մտած*
*Հանգչում է բնութիւն քնքուշ երազով.*
*Պայծառ երկնքում լուսինը վառուած*
*Նայում է երկրին սիրահար աչքով.*

*Այսպիսի գիշեր այրուած սոխակին*
*Իւր բոյրն անուշիկ վարդն է պարգեւում,*
*Այսպիսի գիշեր մատաղհաս երգչին*
*Առաջին սիրոյ շունչն է խռովում . . .*

*Եւ սիրտս մանուկ մի այսպէս գիշեր*
*Ես զոհ բերեցի նենգաւոր կուսին.*
*Էլ այնհուհետեւ, անցան տարիներ,*
*Հանգիստ չտեսաւ իմ տանջուած հոգին.*

*Եւ հիմա մուսաս այսպիսի գիշեր*
*Երեւում է ինձ փուշ պսակ գլխին,*
*Եւ երգում եմ ես քո կուռ շղթաներ,*
*Սարսուռ հայրենիք, իմ մայր տխրագին . . .*

**Յ. Յովհաննիսեան.**